Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

07. 03. 2019 թ ք. Գորիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության կապիտան ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆՍ ուսումնասիրելով ,,27,, 07 2016թ-ին վերսկսված թիվ 01738458, 01738571 և 01738585 կատարողական վարույթների նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված ՍԴ3/0351/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասությանառաջին ատյանի դատարանի 2016թ. ապրիլի 2-ի թիվ ՍԴ3/0007/02/16 քաղաքացիական գործի վճռով սահմանված գումարի բռնագանձումը տարածելու նպատակով Թովմասիկ Բադասյանին, Արամայիս Բադասյանին, Լենա Բաղդասարյանին, Մասիս Բադասյանին և Մարտիկ Բադասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Տեղ համայնքում գտնվող 2.919 հա մակերեսով վարելահողից /կադաստրային համարը՝ 09-101-0127-0023/, 1.389 հա մակերեսով վարելահողից /կադաստրային համարը՝ 09-101-0133-0360/ և 1.47 հա մակերեսով վարելահողից /կադաստրային համարը՝ 09-101-0120-0003/ առանձնացնել համապատասխանաբար 5838 քմ, 2778 քմ և 2940 քմ՝ ըստ ,,Վարմոն Ռիելթի,, ՍՊԸ-ի 2017թ. դեկտեմբերի 25-ի թիվ ,,723-01/Վ-017,, եզրակացությամբ նշված մակերեսներով և 2018թ. հուլիսի 10-ի գրությանը կից ներկայացված հատակագծերի /բաժնեմասի առանձնացման տարբերակներ/ համաձայն:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Թովմասիկ Արամայիսի Բադասյանին և մյուսներին պատկանող անշարժ գույքերի 1/5-րդ բաժնեմասի գնահատման համար նշանակվել էր փորձաքննություն, որոնց արժեքը ըստ փորձաքննության եզրակացության կազմել է ընդհանուր 1.642.000 ՀՀ դրամ:

Կատարողական թերթի պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտ է պարտապան Թովմասիկ Արամայիսի Բադասյանին և մյուսների պատկանող անշարժ գույքի 1/5-րդ բաժնեմասերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ իրացման նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ,,Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,, ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և ,, Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Թովմասիկ Արամայիսի Բադասյանին և մյուսների պատկանող ներքոհիշյալ գույքերը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	Գույքի քանակը
1.	2.919 հա վարելահողի 1/5-րդ բաժնեմաս /5838 քմ/, Սյունիքի մարզ, գ. Տեղ, ծածկագիր 09-101-0127-0023/	**829.000 դրամ**	**621.750 դրամ**	1 միավոր
2.	1.389 հա վարելահողի 1/5-րդ բաժնեմաս /2778 քմ/, Սյունիքի մարզ, գ. Տեղ, ծածկագիր 09-101-0133-0360/	**395.000 դրամ**	**296.250 դրամ**	1 միավոր
3.	1.47 հա վարելահողի 1/5-րդ բաժնեմաս /2940 քմ/, Սյունիքի մարզ, գ. Տեղ, ծածկագիր 09-101-0120-0003/	**418.000 դրամ**	**313.500 դրամ**	1 միավոր

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝harkadir.ajurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ **,, 26 ,, 04 2019թ.**

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: ,, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,, ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ **Վ. ՍԻՄՈՆՅԱՆ**